



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Ս. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

## WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



### ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏԵ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՅ Ա. ՊԱՏԱՐԱԳԻՆ

Կիրակի, 18 Սեպտեմբերին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեան պիտի հանդիսապետե Փասատինայա Ա. Սարգիս եկեղեցւոյ Ա. Պատարագին, եւ պիտի փոխանցե օրուան խորհուրդը ներկայացնող իր պատգամը:

### PRELATE TO PRESIDE OVER DIVINE LITURGY AT ST. SARKIS CHURCH IN PASADENA

On Sunday, September 18, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Divine Liturgy and deliver the sermon at St. Sarkis Church in Pasadena.

\*\*\*

### ՅԱՐՈՒԹ ՊԱՐՍԱՄԵԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿԻ ՄՐՅԱՆԱԿԱԴՈՐՆԵՐԸ

Ազգային Առաջնորդարանի յարկին տակ հաստատուած «Յարութ Պարսամեան Կրթաթոշակ»ի յանձնախումբը, նախագահութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի, իր վերջին նիստին քննարկեց իրեն հասած դիմումնագիրները եւ որոշում տուաւ մրցանակաւորներուն մասին: Առաջնորդ Սրբազանին կողքին, յանձնախումբի անդամ են բարերարը՝ Փրոֆ. Յարութ Պարսամեան եւ Տոբթ. Կարօ Յակոբեան:

Ստացուած 20 դիմումնագիրները քննարկման ենթարկելէ ետք, յանձնախումբը կրթաթոշակները շնորհեց հետեւեալ ուսանողներուն.-

- Ալեքս Թաշճեան՝ 3,000 տոլար
- Սարօ Մազմանեան՝ 3,000 տոլար
- Նելլի Զուտանեան՝ 2,000 տոլար
- Սարին Յակոբեան՝ 2,000 տոլար

## **PRELACY ANNOUNCES "HARUT BARSAMIAN SCHOLARSHIP FUND" RECIPIENTS**

The "Harut Barsamian Scholarship Fund" Committee, which serves under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, has reviewed scholarship applications for this academic term and made a decision as to the recipients. The committee is comprised of the Prelate, Prof. Harut Barsamian, and Dr. Garo Agopian.

From the twenty applications received, the committee awarded scholarships to the following students:

- Alex Tashjian                      \$3,000
- Saro Mazmanian                    \$3,000
- Nelly Choudanian                \$2,000
- Sarin Hagopian                    \$2,000

\*\*\*

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱՆՉՆՈՒՄԻ 20-ԱՄԵԱԿԻ ՆՈՒՐՈՒԾ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ**

Չորեքշաբթի, 21 Սեպտեմբերը Հայաստանի Անկախութեան վերականգնումի 20-ամեակն է: Այս տօնին առիթով գաղութիս մէջ կազմակերպուած են զանազան ձեռնարկներ, ժողովրդային հաւաքներ եւ գեղարուեստական երեկոներ:

Այս ձեռնարկներուն շարքին է Համաժողովրդային տօնախմբութիւն մը, որ կազմակերպուած է ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէի կողմէ:

Ձեռնարկը տեղի պիտի ունենայ Չորեքշաբթի, 21 Սեպտեմբերի երեկոյեան, ժամը 7-ին, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ շրջափակին մէջ:

Պաշտօնական յայտագիրի կողքին, տեղի պիտի ունենայ գեղարուեստական բաժին:

Առաջնորդ Սրբազան Հայրը եւ ժողովականներ ներկայ պիտի ըլլան տօնակատարութեան:

## **ARMENIAN INDEPENDENCE DAY 20<sup>TH</sup> ANNIVERSARY**

Wednesday, September 21<sup>st</sup> is the 20<sup>th</sup> anniversary of the reestablishment of an independent Armenian Republic. A number of community events have been organized to celebrate this anniversary.

The ARF Central Committee has organized a community celebration which will be held on Wednesday, September 21<sup>st</sup>, at 7:00 p.m., in the courtyard of St. Mary's Church in Glendale. The event features keynote

speakers Mr. Hovan Tashjian (Armenian) and Mr. Raffi Hamparian (English), as well as a cultural program.

The Prelate and Councils members will attend the celebration.

\*\*\*

**«ՀԱՅ ՄԱՆՈՒԿԻ ՏԱՐՈՒԱՆ» ԱՌԻԹՈՎ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ  
ՏԻԿՆԱՆՑ ՕԺԱՆԴԱԿ ՄԱՐՄՆԻ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ  
ՁԵՌՆԱՐԿ**

Ծանօթ է որ Ս. Աթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս 2011 տարին հռչակած է Հայ Մանուկի Տարի: Այս առիթով, մեր Թեմին մէջ եւս տեղի կ'ունենան յատուկ ձեռնարկներ ու հանդիսութիւններ:

Այս ծիրին մէջ, Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինը ծրագրած է շարք մը դասախօսական ձեռնարկներ: Շարքին երրորդ հանդիպումը տեղի պիտի ունենայ Հինգշաբթի, 22 Սեպտեմբերին, Ազգային Առաջնորդարանի «Տիգրան եւ Չարուհի Տէր Ղազարեան» սրահին մէջ նախագահութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր:

Ինչպէս նախընթաց հանդիպումները, այս մէկն ալ պիտի սկսի ճաշով, ժամը 11:00ին: Այնուհետեւ, դասախօսելու հրաւիրուած է մասնագետ մանկաբոյժ Տոքթ. Յովիկ Մելիտոնեան: Ան պիտի խօսի մանուկներու արտասովոր գիրութեան երեւոյթին, կանխարգիլման ու դարմանումի միջոցներուն մասին:

Հետաքրքրուողներ կրնան դիմել Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինի անդամներուն կամ կապ պահել Ազգ. Առաջնորդարանի գրասենեակին հետ, հեռաձայնելով 818-248-7737 թիւին:

**"YEAR OF THE ARMENIAN CHILD" THIRD LITERARY LUNCHEON  
TO BE HELD AT THE PRELACY**

In celebration of the "Year of the Armenian Child" proclaimed by H.H. Catholicos Aram I, the Prelacy Ladies Auxiliary has organized a series of literary luncheons under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate.

The third in the series will be held on Thursday, September 22<sup>nd</sup>, at 11:00 a.m., at the Prelacy "Dikran and Zarouhie Der Ghazarian" Hall.

The event begins at 11:00 a.m. with lunch, followed by the lecture. Keynote speaker Dr. Hovig Melidonian will speak on childhood obesity.

Tickets can be reserved by calling the Prelacy office at (818) 248-7737.

\*\*\*

**ԱՐԵՒԵԼԵԱՆ ՈՐԴԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԱՐԵՒՍՏԵԱՆ ՇՐՋԱՆԻ  
ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԺՈՂՈՎ**



Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներու՝ Ղրպտի Ուղղափառ, Ասորի Ուղղափառ եւ Հայց. Առաքելական եկեղեցիներու Արեւմտեան Միացեալ Նահանգներու Առաջնորդները Երեքշաբթի, 13 Սեպտեմբերին ունեցան իրենց հերթական հանդիպումը:

Հանդիպումը տեղի ունեցաւ Էնսինոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ մէջ, հիւրընկալութեամբ Թեմիս

բարեջան Բարձր. Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի:

Առաջնորդ Սրբազան Հօր կ'ընկերանային Զրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքի վարիչներ՝ Գերպ. Ս. Միւռոն Ծ. Վրդ. Ազնիկեան եւ Հոգշ. Ս. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան, եւ Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Ս. Ռազմիկ Քհնյ. Խաչատուրեան:

Առաւօտեան ժամը 11:00ին, Առաջնորդ Սրբազան Հայրը, Գերշ. Ս. Եուճին Արք. Քափլան (Ասորի Ուղղափառ) եւ Գերշ. Ս. Սրապիոն Եպիսկոպոս (Ղրպտի Ուղղափառ), իրենց ընկերակցող եկեղեցական հայրերու մասնակցութեամբ եկեղեցւոյ մէջ կարճ արարողութիւն կատարեցին:

Միացեալ աղօթքէն ետք, Առաջնորդներն ու հոգեւորականաց Դասու անդամներ ունեցան իրենց ժողովը: Չեկոյցներ տրուեցան կիրակնօրեայ դպրոցներու միջ-աշակերտական հաւաքի եւ երիտասարդական կազմերու աշխատանքներուն, ինչպէս նաեւ որոշուեցաւ յառաջիկայ 2012 տարուան միջ-թեմական հոգեւորականաց հաւաքը եւ Սուրբ Պատարագը կատարել Էնսինոյի Ս. Նահատակաց եկեղեցւոյ մէջ: Առաջնորդներու ժողովին, Ս. Աթոռոյս Գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի հովուապետական մօտալուտ այցելութիւնը մաս կազմեց խորհրդակցութիւններուն:

## PRELATE PARTICIPATES IN MEETING OF THE COUNCIL OF ORIENTAL ORTHODOX BISHOPS



On Tuesday, September 13, 2011, the Council of Oriental Orthodox Bishops held their quarterly meeting at Holy Martyrs Church in Encino, hosted by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate.

The day began with a prayer service inside the Church led by the Prelate, H.E. Archbishop Mor Clemis Eugene Kaplan, and H.G. Bishop

Serapion, and with the participation of clergy members from the three Churches.

Very Rev. Fr. Muron Aznikian, Very Rev. Fr. Barthev Gulumian, and Rev. Fr. Razmig Khatchadourian participated in the service and meeting.

Among the items discussed during the meeting were the upcoming Pontifical Visit of H.H. Catholicos Aram I, next year's joint Divine Liturgy which will be held on April 26, 2011 at Holy Martyrs Church, and youth and Sunday School joint activities.

\*\*\*

## Ս. ԽԱՉ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԻՒՆ



Կիրակի, Սեպտեմբեր 11, 2011-ին տօնախմբուեցաւ Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի անուանակոչութեան տօնը, եպիսկոպոսական հանդիսաւոր Ս. Պատարագով եւ ապա մատաղօրիների արարողութեամբ:

Առաւօտեան ժամը 11:00-ին, Թեմիս Բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, «Յրաշափառ»-ի երգեցողութեամբ եւ թափօրով մուտք գործեց եկեղեցի եւ սկսաւ Ս. Պատարագը:

Եկեղեցին լեցուած էր խումներամ բազմութեամբ: Հաւատացեալներու կողքին ներկայ էին շրջանի երեսփոխաններ, Ազգ. Վարչութեան անդամներ, բարերարներ եւ գաղութիս մէջ գործող միութեանց ներկայացուցիչներ:

Պատարագի երգեցողութիւնը կատարեց եկեղեցւոյ դպրաց դասը: «Հայր

Մեր»-էն առաջ, Սրբազան Հայրը իր պատգամը ուղղեց ներկայ հաւատացեալներուն: Սրբազանը պատգամի աւարտին անդրադարձաւ Սեպտեմբեր 11, 2011-ի ահաբեկչական արարքին 10րդ տարեիցին մասին եւ հրաւիրեց ժողովուրդը, որ մասնակից ըլլան Տէր Ռդորմեայի աղօթքին գոհերու յիշատակին:

Պատարագիչ Սրբազան Հայրը նաեւ ներկաներուն յիշեցուց Վեհափառ Հայրապետի հովուապետական այցելութեան եւ այս եկեղեցւոյ 30-ամեակի եւ 90-ամեակի տօնակատարութեան մասին, յառաջիկայ Հոկտեմբեր 23-ին: Պատգամի աւարտին, Սրբազան Հայրը շնորհաւորեց եկեղեցւոյ հովիւները, հոգաբարձութիւնը, երեսփոխանական կազմը, դպրաց դասը եւ Տիկնանց Միութիւնը, Ս. Խաչի տօնին եւ եկեղեցւոյս անուանակոչութեան առթիւ:

Պատարագի աւարտին տեղի ունեցաւ Անդաստանի արարողութիւն եւ ապա ռեհանի օրհնութիւն:

Ապա պատարագիչ Սրբազան Հայրը թափօրով ուղղուեցաւ «Բաղրամեան» սրահ ուր կատարուեցաւ մատաղի օրհնութիւնը եւ բաշխումը: Նաեւ տարիներու գեղեցիկ աւանդութեամբ, «Բաղրամեան» սրահին մէջ տեղի ունեցաւ սիրոյ ճաշ, կազմակերպութեամբ Տիկնանց Օժանդակ Մարմնին, ներկայութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր եւ հիւրերու, եւ գաղութիս հաւատացեալներու:

## FEAST OF THE EXALTATION OF THE HOLY CROSS AND NAME DAY OF HOLY CROSS CATHEDRAL CELEBRATED



On Sunday, September 11, 2011, the Armenian Church celebrated the Feast of the Exaltation of the Holy Cross. This feast is also the name day of Holy Cross Cathedral of Montebello.

On these occasions, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, celebrated Divine Liturgy, delivered the sermon, and

presided over the blessing of the *madagh* at Holy Cross Cathedral.

During his sermon, the Prelate reflected on the 10<sup>th</sup> anniversary of the September 11, 2001 attacks and invited the faithful to pray for the souls of the victims during *Der Voghormya*.

The Prelate also spoke of the upcoming Pontifical Visit of H.H. Catholicos Aram I and announced that His Holiness will celebrate with the parish community the 30<sup>th</sup> anniversary of Holy Cross Cathedral and the 90<sup>th</sup> anniversary of Holy Cross Church on October 23<sup>rd</sup>.

The Prelate concluded his sermon by congratulating the Pastors, Board of Trustees, Delegates, Ladies Guild, and church servants on the name day of Holy Cross Cathedral and wished them success in their service.

The *Antasdan* service (the blessing of the four corners of the earth) and the blessing of basil was held at the conclusion of Divine Liturgy, after which the Prelate was led in a procession to "Bagramian" Hall for the blessing of *madagh*.

A reception organized by the Parish Ladies Guild followed at "Bagramian" Hall.

\*\*\*